ու Թիւրքական քաղաքականութեան վրայ, դառնութեամբ նշուակելով մեծ պետութիւնների անտարբերութիւնը, բացականչում է. «Երբ որ կը հասնի Յաւիտենական Հիւանդի ծայրագոյն ժամը, այն ժամանակ թերևս դիւանագիտութիւնը կը յիշէ Հայաստանը»։

Հայկական սարսափները գերազանցեցին բուլգարականին—շարունակում է Կրիսպի—բայց Բուլգարիան դատաւ իր ազատարար ցաւը... Ի վերջոյ, մի բաղձանք է յայտնում իտալական Բիսմարկը, որ հայոց մեծ ճգնաժամին իր երկրի ամենաղօր վարիչն էր.—ցանկանք, ասում է նա, որ մենք իտալացիներս բաւականաչափ զօրանանք, որպէս զի ազատութիւն ձեռք բերենք Թիւրքիոյ միւս հալածական ազգերի, ի Թիւս նրանց՝ հայերի համար... Ապա հարց է տալիս. կը գայ արդեօք այդ օրը»...

Գեներալ Պեռուկիտոի, երկարօրէն մեկնաբանելով այդ ուշագրաւ նամակը, յիշելով Ադանան, յիշելով և իտալական մեծ բանաստեղծ Կարդուչչիի մի կոչը Թիւրքական ռէժիմի և հայոց աղէտների առթիւ, շեշտում է, որ Կրիսպիի գուշակած բաղձալի օրը հասել է արդէն, որ Իտալիան պէտք է ձայն բարձրացնի ի նպաստ Հայաստանի։

●● Վեհափառ Հայրապետի անուանակոչութեան առթիւ, Հին-Ղրիմի հայոց դպրոցում պարապմունք չեղաւ. եկեղեցում մաղթանք կատարելուց յետոյ, հոգաբարձութիւնը հայ համայնքի կողմից շնորհաւորական հեռագիր ուղարկեց Նորին Վեհափառութեանը՝ բարեմաղթելով երկար կեանք և առողջութիւն յօգուտ գործունէութեան Հայկազեան ժողովրդի։

●● Էջմիածին է ուղևորուել գիւղատնտես Ա. Աթանասեան՝ ծանօթանալու Գէորգեան ճեմարանում գիւղատնտեսական առարկաների դասավանդման գործի հետ և միաժամանակ մասնաւոր խորհրդակցութիւն կազմելու բամբակագործների առաջիկայ Համաժողովի համար։

Վերադարձին Ա. Աթանասեան կայցելի նաև Ալէքսանդրապօլի Ս. Փրկչի դպրոցը՝ ծանօթանալու գիւղատնտեսական առարկաների դասաւանդման հետ։

●● Հայոց Գիւղատնտեսական և Տնայնագործական Ը-իւնը որոշել է հոկտեմբեր ամսի մէջ մի խորհրդակցութիւն հրաւիրել Թիֆլիզում՝ կազմուած մեր այն դպրոցների ներկայացուցիչներից և գիւղատնտեսներից, որոնք 1911—1912 թուականներում Ս. Պետերբուրգի Հայոց Եկեղեցական Խորհրդի կողմից ստացած նպաստներով ունեցել են գիւղատնտեսական պարապմունքներ։ Խորհրդակցութեան նպատակն է պարզել մի շարք խնդիրներ՝ թէ անցեալ տարուայ և թէ առաջիկայ տարուայ պարապմանց շուրջ։

ՏԵՂԱԿԱՆ

◆◆ Քաղաքագլուխ պ. Մ. Պալապանեանը հեռագրով շնորհաւորել էր անուանակոչութեան առթիւ Նորին Սուրբ Օծութիւն Գէորգ Ե վեհափառ կաթողիկոսին քաղաքիս հայ հասարակութեան և իրեն կողմէն։ Այդ հեռագրին ի պատասխան Վեհափառը հեռագրով յայտնել է քաղաքագլխին իր գոհունակութիւնը և օրհնութիւնը։

◆◆ Եկեղեցական Հոգաբարձութիւնը ստացել է Վեհափառ կաթողիկոսէն օրհնութեան և գոհունակութեան հեռագիր ի պատասխան շնորհաւորական հեռագրի անուանակոչութեան առթիւ։ Նոյնպիսի հեռագրներ ստացել են՝ տ. Վահան վարդապետը, տ. Պողոս քահ. Բեղելեանը և դպրանոցի տեսուչ պ. Եր. Շահազիզը։

◆◆ Դումայի անդամների ընտրութեան համար պատուիրակ է ընտրուած Նախիջևանի և Ռոստովի հայ ազգաբնակութեան կողմէն նախկին երկու Պետական դումաների անդամ պ. Մ. Աճեմեանը։

◆◆ Թեմական դպրանոցի տեսուչ պ. Եր. Շահազիզը ուղևորուեց Ս. Էջմիածին մասնակցելու Վեհափառ կաթողիկոսի հրաւերով գումարուելիք ժողովին, որտեղ պէտք է մշակուեն դպրոցների համար նոր կանոնագրութիւն և ծրագրներ։

◆◆ Հայկական տպագրութեան և տառերի գիւտի յօբելեանի առթիւ Թեմական դպրանոցի մէջ կայանալիք հրեկոյթին մասնակցելու է միայն Գոգոյեան դիմնազիոնը, իսկ ծխական դպրոցները տօնելու են առանձին, իրենց դպրոցական յարկի տակ։

◆◆ Զալթիր գիւղի ուսուցչական խումբը հայկական տպագրութեան յօբելեանի առիթով դպրոցի դահլիճի մէջ ներկայացնելու է «Մատոյի կտակը» և «200,000» կատակերգութիւնները։

◆◆ Լուր կայ, որ Մեծ-Սալա գիւղի բժիշկ Խ. Փոստուկեանը տեղափոխուելու է Ռոստովի

շրջանի Եկատերինովկա մեծ գիւղը զեմստվոյի բժշկի պաշտօնով։ Ցանկալի է, որ հայ բժիշկները միայն հայ գիւղերի մէջ, բայց հայ գիւղերը չգիտեն իրենց ինտելիգենտներին ըստ արժանւոյն գնահատել։

◆◆ Ս. Համբարձման, Սանդխտեան Ս. Թորոսի և Հոխխոխիմեան դպրոցները պիտի ներկայացնեն իրենց ուսուցիչ և ուսուցչուհիների անուանացուցակը Պուշկինեան գրադարանի յանձնաժողովին, որ թոյլ տրուի նոցա ևս ձրի օգտուել դրադարանի գրքերէն, ինչպէս այդ թոյլ է տրուած քաղաքի բոլոր տարրական և քաղաքային դպրոցների ուսուցիչ-ուսուցչուհիներին։

◆◆ Ուրբաթ, ամսոյս 5-ին, կատարուեցաւ նոր գիմնազիայի օրհնութեան և բացման հանդէսը։ Ռուս և հայ հոգևորականութեան կատարած մաղթանքներէն ետքը, գիմնազիայի տեսուչ պ. Կուզնեցովը դարձաւ քաղաքի ներկայացուցիչներուն և քաղաքագլուխ պ. Պալապանեանին, իր շնորհակալութիւնը յայտնեց նոցա, որ ոչ մի նիւթական միջոց չունայելով, նոքա աշխատել են բաց անել գիմնազիան։ Դառնալով աշակերտներին պ. տեսուչը խրատական խօսքեր ասաց նոցա, խնդրեց, որ աշակերտները միշտ հաւատով վերաբերուին դէպի իրենց դաստիարակները, իսկ ծայրահեղ դէպքում ինքները վիճաբանութեան մէջ չընկնին, այլ ծնողների միջոցով պարզեն տարաձայնութիւնները։ Ցետոյ դառնալով ծնողներին, պ. տեսուչը յայտնեց, որ մանկավարժական ժողովը իւր նիստերէն մէկի մէջ որոշել էր դիմել և խնդրել շրջանի հոգաբարձուին, որ նա, չունայելով որ ժամանակը անցել է, թոյլ տայ կազմել ծնողներին կոմիտէ։ Այդ խընդիրը պ. հոգաբարձուն յարգել է և կարգադրել է որ կոմիտէն կազմուի մինչև Հոկտեմբերի 15-ը։ Խորհրդի անդամներ ընտրելու համար ծնողները պէտք է հրաւիրուեն ժողովի ամսոյ 10-ին, իսկ եթէ այդ ժողովը չկայանայ, երկրորդ և վերջնական ժողովը կլինի 15-ին։ Ծնողների կոմիտէի, ասաց պ. տեսուչը, իրաւունքները թէպէտ և սահմանափակ են, բայց և այնպէս մեծ նշանակութիւն ունին դպրոցական կեանքի մէջ։ Կոմիտէի նախագահը միևնոյն ժամանակ կմասնակցէ և մանկավարժական ժողովներուն և ներկայ կլինի բնութիւնների ժամանակ։

Վերջացնելով իր խօսքը պ. տեսուչը շնորհակալութիւն յայտնեց բոլոր ներկայ եղողներին և առանձնապէս քաղաքի ներկայացուցիչներուն և պ. Մ. Պալապանեանին։ Վերջինս, յուզուած պատասխանելով պ. տեսչի ճառին, ասաց, որ քաղաքային վարչութիւնը ոչ մի միջոց չէ խնայած և չի էլ խնայիլ, որ դպրոցական գործը կանոնաւոր ընթացք սաանայ քաղաքի մէջ։ Եթէ որևէ կարիք ունենայ գիմնազիան, ասաց պ. Պալապանեանը, դիմեցէք մեզ և մենք անպայման ընդ առաջ կերթանք և կաշխատենք բաւարարութիւն տալ այդ կարիքներուն։ Ցետոյ դառնալով աշակերտներուն պ. քաղաքագլուխը ասաց, որ թէ քաղաքի հասարակութիւնը և թէ ծնողները ամէն ջանք գործ դրել են, որպէս զի բացուի այս ուսումնարանը և դուք պէտք է աշխատէք, որ լաւ սովորելով և աւարտելով ձեր ուսումը պիտանի քաղաքացի դառնաք և օգտակար անդամ լինեք տէրութեան, որին այնքան կարոտ է մեր հայրենիքը։ Թէ պ. տեսչի և թէ պ. Պալապանեանի ճառերը ներկայ եղող հասարակութիւնը ընդունեց ծափահարութիւններով։

◆◆ Երէկ, ամսոյս 6-ին, նոր բացուած գիմնազիայի մէջ սկսուեցաւ ուսումը։

Աշակերտների թիւը 101 է։

◆◆ Ամսոյս 21-ին պ. Եաղուբեանցի ըէալական դպրոցի տարեդարձի օրը դպրոցի դահլիճի մէջ լինելու է հանդէս։

◆◆ Ինչպէս կը լսուի տ. Աննա Պոպովայի անուան մանկապարտէզի նոր շէնքի շինութեան հարցը արդէն վճռականապէս որոշուած է։ Պ. Ռ. Պոպովը յանձն է առած այդ շէնքը կառուցանել իւր հաշուով և ծախսել այդ բանի վրայ մօտ 40 հազար ռուբլի։ Կմնայ միայն որոշել՝ թէ որտեղ աւելի յարմար է այս շէնքը կառուցանել։

Մեր կարծիքով ամենայարմար տեղն է հանդուցեալ Աճեմեանի քաղաքին կտակած տեղը, որ կը գտնուի Ցօլատոյի հրապարակի վրայ։ Պէտք է, որ եկեղեցական հոգաբարձութիւնը դիմէ կտակակատարներուն այդ տեղը իրեն ծախելու մանկապարտէզի համար։

◆◆ † Երէկ հողին յանձնեցին Նախիջևանի վաճառական Յովհաննէս Լուսեղէնեան Խաչիխաչեանին, որ յայտնի էր Նախիջևանի մէջ իբրև հին սերունդի ներկայացուցիչ։ Քաղաքիս մէջ ինչ բարի ձեռնարկութիւն որ եղած է թէ ազգային և թէ եկեղեցական իրեն կարողութեան չափով

միշտ նպաստամատոյց եղած է հանդուցեալը և ազգը համար արժանապէս վայելած-է հասարակութեան բոլոր խաւերու համակրութիւնը և սէրը։

Յիշատակ արդարոյն օրհնութեամբ եղիցի։

◆◆ Ն. Նախիջևանի Հոգևոր կառավարութիւնը, Եկեղեցական Հոգաբարձութիւնը և Թեմական դպրանոցի հոգաբարձութիւնը Հայրապետական Դիւանի կառավարիչ Բագրատ վարդապետէն ստացել են հեռագիր այսպիսի բովանդակութեամբ. «Հայկական տառերու գիւտի 1500 ամեակի և տպագրութեան 400 ամեակի առթիւ Նորին Սուրբ Օծութիւն Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսը բարեհաճած է նշանակել յոբելինական տարի ներկայ 1912 թ. հոկտեմբերի 13-էն մինչև 1913 թ. հոկտեմբերի 12-ը։

Յոբելինական օրը պիտի բացուի այս Հոկտեմբերի 13-ին եկեղեցական և դպրոցական հանդէսներով. 1913 թ. հոկտեմբերի 12-ին Ս. Մեսրոպի տօնի օրը պիտի կատարուի տօնի փակումը հանդէսով Ս. Էջմիածնի մէջ ի ներկայութեան հաւատաւորներու ներկայացուցիչներու։

Յոբելինական տարուայ մէջ պիտի կատարուի հանգանակութիւն կամաւոր նուէրներու՝ դպրոցական ֆոնդ կազմելու համար հայոց եկեղեցական ծխական դպրոցներու օգտին։ Հանգանակութիւնը թոյլատրուած է Նորին Կայսերական Մեծութեան Կովկասի Փոխարքայի կողմէն մէկ տարի ժամանակով։

◆◆ Երկ երեկոյեան Եկեղեցական Հոգաբարձութեան խորհրդարանի մէջ կայացաւ Հոգաբարձութեան հին և նոր կազմերու ժողովը։ Կարդացուեցաւ Ս. Առաջնորդի տառաջադրութիւնը, որով հոգաբարձութեան կազմի նոր անդամները կը հաստատուին իրենց պաշտօնի մէջ։ Կանոնադրութեան համաձայն տեղի ունեցան պաշտօնատար անձանց, այն է՝ նախագահի, գանձապահի, որբանոցի երեք խնամակալի, անկիսանոցի երկու խնամակալի, դպրոց—արհեստանոցի մէկ խնամակալի ընտրութիւնը։

Ս. Առաջնորդը իւր կողմէն յանդամակցութիւն հոգաբարձութեան կարգած է Տ. Գէորգ քհ. Քելլէ-Շահինեանին և Տ. Պօղոս քհ. Բեղելէանին, որոնք կը պաշտօնավարէին և նախկին կազմի մէջ։

ՍՏԱՑՈՒԱԾ ԳՐՔԵՐ

«Արարատ» ամսագիր—յուլիս օգոստոս № 7—8. Վեհափառ Կաթողիկոսի վիմատիպ պատկերով։

«Երիտասարդ» գրական-պատկերազարդ ալմանախ, գիրք Բ. Լ. Մանուէլեանի, Յ. Տէրենցի, Պեսրոս Դուրեանի և Յով. Աբելեանի պատկերներով։

Ա. Զանեան.—Լիլի, էջ 32. գինը 20 կ. ծախսում է Թիֆլիզի գրավաճառների մօտ։

Հր. Ֆալեան.—Հաշուութիւն. Պատմուածք հայ թուրքական ընդհարումներից, էջ 88 Գինն է 30 կոպ.

«ԼՈՒՅՍ»-Ի ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Բագու.—Դան. Սարգ.—Շարունակեցէք կուղարկենք։

Եալթա.—Ս Բաբիեանին.—Ուղարկում էինք բոլոր համարները Արմիանակ—Ներկայ համարից կուղարկենք Եալտա։ Խնդրում ենք ուղարկել՝ կը տպագրենք։

Խմբագիր՝ Բժ. Գ. ՌԷԻԶԵԱՆ.
Հրատարակիչ՝ Մ. ՇԱՊՈՎԱԼԵԱՆ.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Էմ. Բախչիսարայցեանի

Նախիջևանցոց բարբառով պիէսները՝
կատակ. 3 գործողութիւնով

«Մոանի նշանտուք», «Տուն փեսա», «Երկու ժենիխ»։ «Մերոնց կեանքը», «Աշխարքրս մերովէն է», «Սև կատու», «Համա օյին», «Վայ-վայ», «Խաթէն խապէր չանել», «Ակուսի հեքիմին տունը»։

Բեմի վրայ ներկայացնել ցանկացողները պէտք է դիմեն հեղինակին՝ Нахичевань н-Д. 1 Софіевская д. № 17.

ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ և ՎԱՃԱՌԻՈՄ ԵՆ

բոլոր գրավաճառների մօտ ԱԼԵՔՍԱՆԴՐ ԱԲԵԼԵԱՆԻ՝ հետևեալ աշխատութիւնները.

Մարդոց ճրագներ II տպ. փոփոխած 60 կ.

Նշանուածներ պիես 3 արար. 60 կ.

Գարբեջուկ. Ֆեերիա փոքրերի համար 10 կ.

Հեղինակի հասցէն՝ Ն. Նախիջևան։